ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

05.07.2025

Շնորհավո՛ր Սահմանադրության օրը, սիրելի՛ հայրենակիցներ:

Այսօր, առավել քան երբևէ, մենք կարևորում ենք օրենքի գերակայության, քաղաքացիական պատասխանատվության և միասնության դերը՝ որպես ազգային առաջընթացի հիմնասյուներ:

Հուլիսի 5-ը մեր պետական ամենակարևոր տոներից մեկն է, որովհետև 30 տարի առաջ Սահմանադրության ընդունումը ոչ միայն ամրագրեց ՀՀ քաղաքացիների հիմնարար իրավունքներն ու ազատությունները, այլև ամրապնդեց պետականության իրավական հիմքն ու ինքնիշխանության իրավունքը:

Մեր հարգանքը՝ այն քաղաքացիներին, որոնք իրենց առօրյա գործունեությամբ պահպանում են Մայր օրենքի արժեքները:

Թո՛ղ Սահմանադրությունը շարունակի լինել օրենքի գերակայության, ժողովրդավարական ինստիտուտների և ազգային ինքնիշխանության ճանապարհին գլխավոր ուղեցույց:

Մաղթում եմ բոլորիդ խաղաղություն, բարեկեցություն, քաջառողջություն և վստահություն ապագայի նկատմամբ:

Թո՛ղ մեր հայրենիքի յուրաքանչյուր քաղաքացի իրեն զգա պաշտպանված ու հարգված իր երկրում:

Եկե՛ք շարունակենք համատեղ աշխատել՝ մեր պետական ինստիտուտները ամրապնդելու և ՀՀ բոլոր քաղաքացիների համար ավելի լավ ապագա ապահովելու համար: